

Ք. Ստեփանակերտ

(ֆիզիկական անձի անուն, ազգանուն)

այսուհետ՝ «Չրոսաշրջիկ» մի կողմից, և «Ֆյուչեր» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Արմեն Բալայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Չրոսաշրջիկի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.1.1 Սոցիալական փաթեթի շահառուի հետ կնքել հետևյալ պայմանագրի տեսակը՝

Կանխավճարային՝		Չեովճարային՝	
----------------	--	--------------	--

1.1.2 Սոցիալական փաթեթի շահառուի աշխատանքի վայրը և հասցեն՝

--	--

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

1.2.1 Տեղաբաշխել (տեղավորել) զբոսաշրջիկին հետևյալ վայրում՝

--	--

1.2.2 Ապահովել Չրոսաշրջիկի շրջագայությունը հետևյալ երթուղով՝

--	--

1.2.3. Երկկողմանի տրանսպորտ

1.3 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունների մատուցման ժամկետն է՝

Սկսած _____ մինչև _____

1.4 Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունների ժամկետի ավարտի պահին՝ երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելով:

2. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

2.1 Պայմանագրի գինը կազմում է՝ _____ ՀՀ դրամ, որից հյուրանոցի արժեքը՝ _____ ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1 կետում նշված պայմանագրի գինը վճարվում է միանգամից կամ ամենամսյա պարբերականությամբ, իսկ առաջին վճարումը կատարվում է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը ստորագրելուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Կատարողը պարտավորվում է ծառայությունը մատուցել պատշաճ որակով և 1.4 կետում նշված ժամկետում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է պահպանել Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները:

3.3 Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու և ծառայություններից չօգտվելու դեպքում տուգանքի չափ է սահմանվում՝ ա. Պայմանագրի գնի մինչև 25%-ի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ:

բ. Պայմանագրի գնի մինչև 50%-ի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է և խախտել է սույն ենթակետի «Ա» պարբերությամբ նախատեսված ժամկետը:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս/մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է Պայմանագրի մեկական օրինակ, իսկ երրորդ օրինակը ներկայացվում է բանկ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՅՎԻՐԱՑՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հասցե Անձնագիր՝ Մոց. փաթեթի h/h՝ Բանկ՝ Հեռ.՝ Ստորագրություն՝	Հասցե՝ ԼՂՀ, Ք. Ստեփանակերտ, Մաշտոցի 5ա/53 h/h՝ 22300032290700 Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ ՀՎՀՀ՝ 90029023 Հեռ.՝ 011 210110,094 358075 Ստորագրություն՝
---	--

Փոխանցման հաշիվ

Հ/Հ	Անվանում	Քանակ	Միավ.	Գին	Գումար
1	Հանգստի կազմակերպում		գիշերակաց		

Ընդամենը՝

Գումարը բառերով՝ _____ ՀՀ դրամ

Տնօրեն՝

Ա. Աղաջանյան

